ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՐԲ. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՍՏՐԱԽԱՆԻ, ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1700ականներ-1917)[1]

ՄԱՐԻԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ
mariam10hakobyan10@gmail.com

ՄՈՒՏՔ

Հայ առաքելական եկեղեցու վարչատարածքային միաւոր թեմի ձեւաւորման գլխաւոր նախապայմանը հայութեան որոշակի թուաքանակի եւ բաւարար կազմակերպուած հայկական համայնքի առկայութիւնն է[2]: Մասնաւորապէս Ռուսաստանում հայերը հաստատուել են դեռեւս Ժ.-ԺԱ. դարերում, սակայն հայկական գաղթօճախների ստուարացումը տեղի է ունեցել աւելի ուշ՝ ԺԷ.-ԺԸ. դարերում՝ Ռուսական կայսրութեան աշխարհաքաղաքական ձգտումների եւ հայ-ռուսական յարաբերութիւնների ձեւաւորման ընթացքում, որի հարցում զգալի դերակատարում ունեցաւ Հայ Առաքելական Եկեղեցին: Հոգեւոր գործիչներ Սիմէոն Երեւանցին, Ներսէս Աշտարակեցին, Յովսէփ Արղութեանը, որոնք եռանդուն զբաղւում էին Հայաստանի ազատագրման քաղաքական ծրագրերի մշակմամբ, կապեր հաստատեցին ռուսական արքունիքի հետ՝ գլխաւորապէս նպատակ ունենալով ազատուելու թուրք-պարսկական ճնշումներից[3]: Կայսրութեան դիտանկիւնից Հայ Եկեղեցին միջոց էր Կովկասում իր ազդեցութիւնը տարածելու եւ պահպանելու համար: Իր հերթին եկեղեցին ընդունեց ռուսական գերիշխանութիւնը որպէս քաղաքական իրականութիւն՝ չհրաժարուելով

---

[1] Հետազօտութիւնն իրականացուել է Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմից տրամադրուած դրամաշնորհի շրջանակում: Այս հրատարակութեան մէջ ներկայացուած կարծիքներն անպայմանօրէն չեն ներկայացնում Հիմնարկութեան տեսակէտերը: Հիմնարկութեան աջակցութիւնը չի ենթադրում որեւէ կարծիքի կամ դիրքորոշման հաստատում:

[2] Հայ Եկեղեցու կանոնադրութեամբ թեմի ստեղծման համար յստակ թուաքանակ սահմանուած չէ:

[3] Ш. Ананян, “Армянская апостольская церковь в армяно-русской официальной переписке 1717–1828 гг.,” *300 лет Российской и новонахичеванской епархии армянской апостольской церкви, исторический путь и современность 1717-2017, Материалы Международной конференции 24–25 октября, 2017 г.*, (Շ. Անանեան «Հայ Առաքելական եկեղեցին հայ-ռուսական պաշտօնական նամակագրութիւնում (1717–1828)», *Հայաստանեայց Առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի 300ամեակը. պատմական ուղին եւ արդիականութիւնը (1717–2017), Միջազգային գիտաժողովի նիւթեր, 24–25 Հոկտեմբերի, 2017*), «Բանալի-Ս» հրատ., Մոսկուա, 2018, էջ 15:

հոգեւոր եւ ազգային ինքնութիւնը պահպանելու իր գործառոյթից: Դրա յստակ եւ փաստական արտայայտումն եղաւ Պոլոժենիայի (1836) ընդունումը, որը պաշտօնապէս ամրագրեց թեմերի կարգավիճակը, վարչական պարտականութիւնները եւ կապը ռուսական իշխանութիւնների հետ[4]:

Սոյն ուսումնասիրութիւնը Սրբ. Էջմիածնի Աստրախանի, Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի հայոց թեմերի[5] ձեւաւորմանն ու պատմութեանն է անդրադառնում՝ յենուելով թեմայի շուրջ առկայ գիտական գրականութեան, եւ Հայաստանի Ազգային արխիւում պահպանուող եւ դեռեւս չշրջանառուած մի շարք փաստաթղթերի վրայ:

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ ԵՒ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԱՐԱՑՈՒՄԸ

Պետրոս Ա.ը (1682-1725) եւ Եկատերինա Բ.ը (1762-96) Ռուսական կայսրութեան հարաւային սահմաններն ընդլայնելու եւ արեւելեան առեւտրային ուղիները վերահսկելու, հարաւի ծովեր դուրս գալու քաղաքականութեան իրականացման գործում մեծ տեղ յատկացրին տարածաշրջանի քրիստոնեայ ժողովուրդներին՝ հայերին եւ վրացիներին, որոնք իրենց հերթին, թուրք-պարսկական լծից ազատագրուելու ազգային-ազատագրական ձգտումները սկսեցին կապել Ռուսական կայսրութեան հետ:

Հայ-ռուսական յարաբերութիւնների ձեւաւորմանը զուգընթաց լայն լիազօրութիւններ տրուեցին նաեւ կայսրութեան տարածքում բնակուող հայ առեւտրականներին եւ արհեստաւորներին: Արդիւնքում, ռուսահայ գաղթօճախները, որոնք նախապէս առեւտրական կայաններ էին յիշեցնում, ըսկսեցին հաստատուն բնակչութիւն ունենալ[6]:

Գաղթօճախներում առաջին եկեղեցիների, կրթօճախների կառուցման նախաձեռնողներից շատերը առեւտրականներ էին: 1660ին ջուղայեցի վաճառական Զաքար Սահրադեանի նախաձեռնութեամբ Աստրախանում եկեղեցի է կառուցւում: Աւելի ուշ՝ 1706ին ջուղայեցի Բոգդան Բոգդանովի խնդրագրի համաձայն Պետրոս Ա.ը թոյլատրում է քարաշէն եկեղեցի կառուցել, որի շինարարութիւնը շարունակւում է մինչեւ 1730ականները: Եկեղեցին, որը կրում էր Սրբ. Աստուածածին անունը, յետագայում դառնում է

---

[4] Б.А. Осипян, Положение «Об управлении духовных дел армян армяно-григорианского исповедания в Российской Империи» от 11 марта 1836 года, Лоббирование в законодательстве (Բ. Ա. Օսիպեան, «Հայ Գրիգորեան դաւանանքի հոգեւոր գործերի կառավարման կանոնադրութիւնը Ռուսական կայսրութիւնում» 1836 թ. մարտի 11ից, *Լոբբինգը օրէնսդրութիւնում*, 3(4):2023, էջ 22]:

[5] Տուեալ ժամանակաշրջանում ռուսահայ գաղթօճախները ընդգրկուած են եղել երկու թեմերում՝ Աստրախան, Նոր Նախիջեւան եւ Բեսարաբիա:

[6] Վ. Բարխուդարեան, Հ. Ալեքսանեան, *Ռուսաստանի հայ գաղթօճախների պատմութիւն*, Պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2015, էջ 39:

Աստրախանի թեմական կենտրոնը[7]: Ռուսահայ գաղթօճախի երկու նշանաւոր կրթարանների՝ Լազարեան ճեմարանի[8] եւ Աղաբաբեան դպրոցի[9] հիմնադիրները նոյնպէս յայտնի վաճառականներ էին:

Հայկական նոր համահաւաք գաղթօճախներ են ձեւաւորւում Հիւսիսային Կովկասում (Ղզլար, Մոզդոկ, Սուրբ Խաչ, Արմաւիր, Մայկոպ, Ստաւրոպոլ, Վլադիկաւկազ, Գրոզնի, Գէորգիեւսկ, Պիատիգորսկ)[10]:

1762-63ին Եկատերինա Բ.ի հրովարտակներով կայսրութիւնում հաստատուող օտարերկացիներին, տարբեր արտօնութիւններից բացի, նաեւ դաւանանքի ազատութիւն է տրւում: Արդէն 1770 Մայիսի 2ին հայերին թոյլատրւում է Սանկտ Պետերբուրգում եւ Մոսկուայում քարաշէն եկեղեցիներ հիմնել: Հայկական եկեղեցիներ են հիմնւում նաեւ նորաստեղծ Ղզլարում (1754ին, 1772ին), Մոզդոկում (1778ին, 1779ին), Սուրբ Խաչում եւ այլուր[11]:

Հայ-ռուսական յարաբերութիւնները սերտացան 1828ի Թուրքմենչայի պայմանագրով, երբ Արեւելեան Հայաստանը միացուեց Ռուսաստանին:

1897ին անցկացուեց համառուսաստանեան առաջին մարդահամարը ըստ որի, կայսրութեան տարածքում ապրում էր 1.173.096 հայ, որը կազմում էր ընդհանուր բնակչութեան 1,17%ը: Կովկասում հայերի թուաքանակը 1.118.094 էր, Հիւսիսային Կովկասում՝ 31.114, Կուբանեան շրջանում՝ 13.926, Թերէքի շրջանում՝ 11.803, Ստաւրոպոլի նահանգում՝ 5385, Հարաւային Կովկասում՝ 1.086.980, Եւրոպական Ռուսաստանում՝ 49.329, որոնք բաշխուած էին հետեւեալ կերպ.- 27.234ը բնակւում էր Դոնեան շրջանի Ռոստով գաւառում, Տաւրիկեան նահանգում՝ 8938, Բեսարաբիայում՝ 2080, Աստրախանի նահանգում՝ 4270, Սանկտ Պետերբուրգում՝ 758, Մոսկուայում՝ 1604, Օդեսայում՝ 1401 հայ[12]:

---

[7] Նոյն, էջ 40:

[8] Մոսկուայի Լազարեան ճեմարանը հիմնուել է 1815ին, մեծահարուստ Լազարեան ընտանիքի նախաձեռնութեամբ եւ կարճ ժամանակ անց դարձել տարածաշրջանի արեւելագիտութեան առաջատար կենտրոններից մէկը: 1827ին վերանուանուել է Լազարեան արեւելեան լեզուների ինստիտուտի եւ անցել ժողովրդական կրթութեան նախարարութեան հսկողութեան ներքոյ: 1848ին ստացել է լիցէյի աստիճան, իսկ 1919ին վերանուանուել Հայկական ինստիտուտ, այնուհետեւ՝ Մոսկուայի արեւելագիտութեան ինստիտուտ: Այսօր ճեմարանի շէնքում է տեղակայուած Ռուսաստանի Դաշնութիւնում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը:

[9] Աղաբաբեան դպրոցը բացուել է 1810ին, հայ վաճառական Նիկողայոս Աղաբաբեանի ջանքերով եւ իր եղբայրների միջոցներով: Դպրոցը գործել է մինչեւ 1917:

[10] Բարխուդարեան, Ալեքսանեան, էջ 67-92:

[11] Նոյն, էջ 68-69. նաեւ՝ *Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920 թ.) Սլաւոնական աշխարհի եւ Հիւսիսային Կովկասի հայկական գաղութները, հտր. 1*, խմբ. Վ. Միքայէլեան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ, Երեւան, էջ 353-54:

[12] Մ. Վարդապետ, *Հայերը Ռուսաստանում*, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1906, էջ 76:

Դաւանաբանական պատկերն ունէր հետեւեալ տեսքը.- 1.179.622ը առաքելականներ էին (հայ, ուտիացի, բոշա), իսկ հայ կաթոլիկները կազմում էին 38.841: Ընդհանուր՝ 1.218.463ից 1.173.471ը հայախօս էր[13]: Աւելի ուշ՝ 1900ի դրութեամբ Կովկասում առաքելական հայերի թուաքանակը 1.101.710 էր, իսկ Կովկասից դուրս՝ 29.764:

Ռուսական կայսրութեան դաւանաբանական պատկերը ըստ 1897ի համառուսաստանեան առաջին վիճակագրութեան		
	առաքելականներ	հայ կաթոլիկներ
Եւրոպական Ռուսաստան	47.884	2235
Պրիւիսլեան նահանգ	221	417
Կովկաս	1.125.795	36.114
Սիբիր	503	11
Միջին Ասիա	4838	30
Ընդհանուր	1.179.241	38.807[14]

Արեւելեան Հայաստանը նուաճելուց յետոյ Ռուսական կայսրութեան կարեւորագոյն քայլերից դարձաւ Հայ Եկեղեցու գործունէութիւնը նոր քաղաքական պայմաններին համարժէք դարձնելը: Այն ենթադրում էր նուազեցնել հայ եկեղեցու քաղաքական ազդեցութիւնը, հեշտացնել Կովկասի կառավարումը, ինչպէս նաեւ եկեղեցու միջոցով հայ բնակչութեանը վերահսկելի դարձնել:

1836 Մարտի 11ին հաստատուած եկեղեցական կանոնադրութեամբ (Պոլոժենիա, բաժին 2, յօդուածներ 9-30) սահմանուեցին եկեղեցու եւ կայսրութեան յարաբերութիւնները, վերաձեւուեց Հայ առաքելական եկեղեցու կառավարչութիւնը: Եկեղեցին զրկուեց պետական գործերին միջամտելու հնարաւորութիւնից, փոխարէնը զբաղուելով միայն դպրոցի, եկեղեցական-ծիսական խնդիրներով: Սահմանուեցին եկեղեցական կառոյցները. Ռուսական կայսրութեան տարածքում հաստատուեցին վեց՝ Նախիջեւանի-Բեսարաբիայի, Աստրախանի, Էրիւանի, Վրաց, Ղարաբաղի, Շիրվանի թեմերը եւ վերջիններիս վարչական սահմանները[15]:

ԱՍՏՐԱԽԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՁԵՒԱԽՈՐՈՒՄԸ

Ռուսահայ գաղթօճախների ստուարացմանը զուգընթաց սկսեց ձեւաւորուել նաեւ համայնքային, հոգեւոր եւ ազգային կեանքը: Ռուսաստանում առաջին թեմը հիմնադրուեց 1717ին, երբ Էջմիածնի կաթողիկոս Աստուածատուր Ա. Համբարձումեանը ռուսաստանաբնակ հայերի համար թեմական առաջնորդ նշանակեց Ստեփանոս Գաղաթեցուն, որի նստավայրը

[13] Նոյն, էջ 68, 74-75:

[14] Նոյն, էջ 68:

[15] A. Ferrari, "Collaboration sans interaction. L'Eglise arménienne au sein de l'Empire russe," *Slavica Occitania*, 2009, էջ 121, 123:

դարձաւ Աստրախանի Սրբ. Աստուածածին եկեղեցին: Պետրոս Ա.ի մահից յետոյ, սակայն, ռուս ուղղափառ եկեղեցին, արգելեց նրա գործունէութիւնը[16]: ԺԸ. դարի 30-40ականների կէսերին Աստրախանի թեմը գլխաւորում էր Թիֆլիսի արքեպիսկոպոս Ստեփանոս Վարդապետովը, այնուհետեւ՝ այն անցաւ Գանձասարի կաթողիկոսութեանը[17]:

Ամենայն հայոց կաթողիկոս Սիմէոն Երեւանցու աթոռակալման տարիներին, նրա անմիջական դերակատարմամբ, տեղի ունեցաւ ռուսահայոց թեմի վարչական կարգավիճակի հաստատումը: 1766ին կաթողիկոսի աջակցութեամբ Դաւիթ վարդապետի գլխաւորած պատուիրակութիւնը մեկնեց Ս. Պետերբուրգ: Դրան հետեւեց 1766 Յուլիսի 22ի Եկատերինա Բ.ին ուղղուած Սիմէոն Երեւանցու նամակը, որտեղ շեշտւում էր ռուսական արքունիքի հետ պատշաճ եւ վստահելի յարաբերութիւններ կառուցելու համար ռուսահայերին հայոց հոգեւոր կենտրոն Սրբ. Էջմիածնին ենթարկուելու անհրաժեշտութիւնը[18]: Ռուսահայոց նորաստեղծ թեմի կենտրոնը դարձաւ Աստրախան քաղաքը[19]:

1767 Յունուարի 3ին աստրախանաբնակ հայերը կաթողիկոսին ուղարկուած նամակում ճանաչեցին Էջմիածնի հոգեւոր գերակայութիւնը, իսկ 1768 Յուլիսի 30ին Եկատերինա Բ.ի հրովարտակով Էջմիածինը պաշտօնապէս իրաւասութիւն ձեռք բերեց կայսրութիւնում բնակուող հայերի նկատմամբ: 1867ին Գէորգ Դ. կաթողիկոսի կոնդակով Աստրախանի եւ Կովկասի թեմական առաջնորդ նշանակուեց Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեանը[20], որը կառավարման առաջին տարիներից բազմաթիւ թեմական այցելութիւններ է կատարում: 1773-1800՝ հոգեւոր առաջնորդ Յովսէփ արք. Արղութեան Երկայնաբազուկի կառավարման տարիներին թեմը կայուն հիմքերի վրայ դրուեց[21]: Նրա գործունէութիւնը նշանակալի էր ինչպէս կրօնական, այնպէս էլ քաղաքական-մշակութային առումներով:

---

[16] В. Акопян, "Государственная конфессиональная политика в отношении армянской апостольской церкви на Северном Кавказе в 1917–1960-е гг," *300 лет Российской и Ново-Нахичеванской,* [Վ. Յակոբեան, «Հայ Առաքելական Եկեղեցու նկատմամբ պետական կրօնական քաղաքականութիւնը Հիւսիսային Կովկասում 1917-960ականներին», *Հայաստանեայց Առաքելական եկեղեցու Ռու-սաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի 300ամեակը],* էջ 69:

[17] В. Тунян, "Становление Астраханской епархии ААЦ в XVIII - начале XIX в," *300 лет Российской и Ново-Нахичеванской,* [Վ. Թունեան, «Աստրախանի ՀԱԵ թեմի կազմաւորումը XVIII-XIX դարի սկզբին», *Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Ռուսաստանի եւՆոր Նախիջեւանի թեմի 300ամեակը],* էջ 24:

[18] Ананян, էջ 13:

[19] Նոյն, էջ 12-13:

[20] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 56, ց. 1, գ. 4987, թ. 1:

[21] Մ. Վարդապետ, էջ 55:

1786ին նրա ջանքերով հիմնադրուեց Աստրախանի հոգեւոր խորհուրդը[22]: 1799ին կայսեր հրովարտակով Գրիգորիոպոլսի[23], Ղրիմի, Մոզդոկի, Աստրախանի գաղթավայրերի համար մշակւում եւ սահմանւում են միասնական արտօնութիւններ (հայերին թոյլատրւում էր դատավարութիւն իրականացնել ազգային սովորոյթների եւ իրաւական նորմերի միջոցով, մետաքսամշակութեամբ զբաղուող հայերը ազատւում էին զօրքին օթեւան յատկացնելու պարտականութիւնից, թոյլատրւում էր կատարել ազատ եւ անմաքս առեւտուր ինչպէս Ռուսաստանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս եւն.[24]), որոնց մշակման գործում մեծ դեր է կատարում նաեւ Արղութեանը[25]:

Աստրախանի հայոց թեմում, մինչեւ Ռուսական կայսրութեան անկումը, յաջորդաբար աթոռակալել են՝ Ստեփանոս Գաղաթեցին, Մինաս Լըվովեանը, Յովսէփ Արղութեանը, Եփրէմ Ձորագեղցին, Ներսէս Աշտարակեցին, Սերովբէ Սալանթեանը, Մաթեւոս Վեհապետեանը, Գէորգ Վեհապետեանցը, Սուքիաս Պարզեանցը, Գէորգ Սուրէնեանցը, Մխիթար Տէր-Մկրտչեանը, Արիստակէս Սեդրակեանը, Մեսրոպ Տէր-Մովսիսեանը:

Թեմի վարչաժողովրդագրական նկարագիրը

1900ին Մայր աթոռ Սրբ. Էջմիածնի կողմից ներքին գործերի նախարարութեանը ներկայացուած տեղեկագրի համաձայն Աստրախանի թեմն ունէր 39 եկեղեցի, 1 արքեպիսկոպոս, 57 քահանայ, 46 եկեղեցական ըսպասաւոր, 39.001 ծխական, որից 29.622ը՝ քաղաքաբնակ, 9379ը՝ գիւղաբնակ եւ 1 բարեգործական հաստատութիւն, որտեղ ապրում էին 44 կարիքաւոր հայեր: Թեմի տարեկան բիւջէն 500.456 ռուբլի եւ 54 կոպէկ էր[26]:

1904ի դրութեամբ Աստրախան քաղաքում թեմապատկան 60 դեսիատին (655.524 մ^2) հողատարածքի եկամտից տարեկան 150 ռուբլին օգտագործւում էր թեմական կարիքների համար: Որպէս անշարժ գոյք թեմն ունէր նաեւ 3 այգի, 3 պարտէզ, 47 տուն, 2 շինութիւն, 3 հողատարածք: 1907ին Աստրախանի հայոց թեմն ունէր 50.543 բնակչութիւն եւ 59 հոգեւորական: Աւելի ուշ՝ 1912ի տեղեկագրում հայութեան թուաքանակը արդէն

---

[22] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան, հատոր 1*, Վաղարշապատ, 2002, էջ 119:

[23] Քաղաքը հիմնադրուել է 1792ին: Այստեղ բնակութիւն են հաստատել ռուս-թուրքական պատերազմի ժամանակ (1787-91) Իզմայիլի ազատագրումից յետոյ անօթեւան մնացած 1650 հայերը: Քաղաքը կոչուել է Գրիգորիոպոլիս Գրիգոր Լուսաւորչի անունով (նոյն, էջ 156):

[24] Է. Մինասեան, Բ. Մայիլեան, Հ. Մխոյեան, *Հիւսիսային Կովկասի հայկական համայնքները 20րդ դարում. պատմութիւն եւ մարտահրաւէրներ*, Երեւան, 2018, էջ 18:

[25] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան,* էջ 119:

[26] Մ. Վարդապետ, էջ 34:

63.134 էր, թեմն ունէր 75 եկեղեցի, 68 հոգեւորական, որոնք ըստ արխիւային փաստաթղթերի բաշխուած էին հետեւեալ կերպ[27].-

1912ին Աստրախանի հայոց թեմի վարչաժողովրդագրական նկարագիրը, հոգեւորականների եւ եկեղեցիների թուաքանակը			
Նահանգ, մարզ	**Հայութեան թուաքանակ**	**եկեղեցի**	**հոգեւորական**
Աստրախան նահանգ	3822 (1066 տուն)	5	9
Դաղստանի շրջան	642 (174 տուն)	2	2
Թերէքեան մարզ	14.043 (3061 տուն)	13	16
Կուբանեան մարզ	16.302 (2997 տուն)	17	13
Սեւծովեան նահանգ	9931 (1788 տուն)	19	9
Ստաւրոպոլի նահանգ	5127 (998 տուն)	4	5
Սարատովի նահանգ	228 (77 տուն)	1	1
Սիբիր	848 (70 տուն)	1	1
Նիժնի Նովգորոդի նահանգ	----	1	1
Խարկովի նահանգ	828 (148 տուն)	2	2
Թուրքեստանեան մարզ	11.363 (2125 տուն)	10	10

Ռուսական կայսրութեան նուաճողական քաղաքականութեան ընթացքում ռուսահայոց թեմական սահմանները ժամանակ առ ժամանակ փոփոխուել են: Նուաճուող տարածքներում հայ բնակչութեան աւելացող թուաքանակը դժուարացնում էր հոգեւոր գործերի կառավարումը, ուստի նոր թեմի ձեւաւորման անհրաժեշտութիւն էր ստեղծւում: Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի հիմնադրումից յետոյ (1830), Աստրախանի թեմի վերահսկողութեան ներքոյ մնում են միայն Հիւսիսային Կովկասի, Պովոլժիէյի, Սիբիրի, Միջին Ասիայի հայկական համայնքները[28]: ԺԹ. դարի 2րդ կէսին Աստրախանի թեմը համալրւում է Միջին Ասիայի քաղաքներում, Եկատերինոդարում, Վլադիկաւկազում, Ստաւրոպոլում, Պիատիգորսկում, Արմաւիրում, Հիւսիսային Կովկասի այլ վայրերում ստեղծուած նոր համայնքներով[29]: Ռուսական կայսրութիւնում եկեղեցին դիտարկւում էր որպէս պետական հաստատութիւն, հետեւաբար թեմական վարչական փոփոխութիւնները կատարւում էին ցարական իշխանութեան համաձայնութեամբ:
1911ին երկու թեմերի միջեւ սահմանային խնդիրեր են առաջանում: Աստրախանի թեմը փորձում է իր իրաւասութեան ներքոյ վերցնել նաեւ

[27] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 381, թ. 47 շրջ.:

[28] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*ը նշում է նաեւ Ս. Պետերբուրգ եւ Մոսկուա քաղաքները, սակայն ըստ արխիւային փաստաթղթերի 1830ից այդ համայնքները համարուել են Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմական տարածքներ (*Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, էջ 119. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1924, թ. 3, 8):

[29] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, էջ 119:

Ռուսաստանի արեւմտեան սահմանների հայաբնակ վայրերը, Տաւրիկեան նահանգը, որոնք մինչ այդ Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի կազմում էին[30]: Իվերջոյ 1913 Յունուարի 28ի Ռուսաստանի ներքին գործերի նախարարի որոշմամբ վերոնշեալ բնակավայրերի կարգավիճակը մնում է անփոփոխ: 1917ի Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ թեմը տակաւ թուլացաւ: Միջին Ասիայի հայկական համայնքները կորցնելուց յետոյ այն վերանուանուեց Հիւսիսային Կովկասի եւ Աստրախանի թեմ, որի կենտրոնը 1920ին դարձաւ Արմաւիր քաղաքը, իսկ 1960ականների սկզբին թեմը լուծարուեց: Թեմապատկան համայնքները 1966ից միացուեցին նորակազմ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմին՝ Մոսկուա կենտրոնով[31]:



Նոր Նախիջեւանի յատակագիծը
(https://boudewijnhuijgens.getarchive.net/amp/media/nahichevan-na-donu-karta-1897-606f5c)

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՁԵՒԱՒՈՐՈՒՄԸ

Ռուսական կայսրութեան տարածքային ընդլայնումը եւ հայութեան թուաքանակի աճը նպաստեցին ռուսահայոց երկրորդ թեմի ձեւաւորմանը: 1809ին, Ալեքսանդր Ա.ի՝ Բալկաններում նուաճած տարածքների վրայ ձեւաւորուեց Բեսարաբիայի թեմը՝ Եասի կենտրոնով: Թեմի յետագայ վարչաժողովրդագրական նկարագրի վրայ մեծ ազդեցութիւն թողեցին 1783ի Ղրիմ թերակղզու միացումը Ռուսաստանին եւ դրան նախորդած տարիներին ռուսական արքունիքի դիւանագիտական ջանքերը, որի շնորհիւ թերակղզուց դուրս է բերւում քրիստոնեայ բնակչութիւնը: Ղրիմի 15 քաղաքներից եւ գիւղերից արտագաղթած շուրջ 12.600 ղրիմահայեր 1779ին հաստատւում են Դոնի շրջանում եւ ռուսահայոց թեմի առաջնորդ Յովհաննէս Արղութեանի անմիջական ջանքերով հիմնադրւում է Նոր Նախի-

[30] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1924, թ. 4-5:
[31] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, էջ 119:

ջեւան քաղաքը եւ նրա շրջակայ 5 հայկական գիւղերը (Չալթըր, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Թոփթի, Նովիթա)[32]: 1779 Նոյեմբերի 14ին Եկատերինա Բ. կայսրուհու հրովարտակով մի շարք՝ այդ թւում դաւանանքային, արտօնութիւններ են շնորհւում ղրիմահայերին: Թոյլատրւում է հոգեւոր կենտրոն Մայր աթոռի թոյլտուութեամբ բացել եկեղեցիներ, կանգենցնել զանգակատներ, հետեւել եկեղեցական ծիսակատարութիւններին[33]:

Յովհաննէս արք. Արղութեանի դիմումների վրայ 1799 Հոկտեմբերի 28ի կայսերական հրովարտակով հայերը հաստատւում են նաեւ Հին Ղրիմ քաղաքում, որտեղ եկեղեցուն շնորհւում է նաեւ հասարակական բնոյթի գործառոյթներ: Մինչեւ 1803 ղրիմահայ եկեղեցին ենթարկւում է Նոր Նախիջեւանի հոգեւոր կառավարչութեանը, դրանից յետոյ գործում է Ղրիմի հոգեւոր կառավարչութիւնը, իսկ 1840ականների կէսերից Աշտարակեցու ջանքերով այն վերածւում է Ղրիմի հայկական եկեղեցիների եւ վանքերի հոգաբարձութեան, որի հիմնական գործառոյթը եկեղեցապատկան գումարների շրջանառութեան վերահսկումն էր[34]:

1812ին, երբ Բուխարեստի պայմանագրով, Եասին անցնում է Օսմանեան կայսրութեանը, նորաստեղծ Բեսարաբիայի թեմի կենտրոնը տեղափոխւում է Քիշնեւ, իսկ առաջնորդանիստը դառնում է տեղի Սրբ. Աստուածածին եկեղեցին: Նոր թեմում ընդգրկւում են Բեսարաբիան, Մոլդովան, Մոսկուան, Սանկտ Պետերբուրգը, Ռուսական կայսրութեան հարաւային շրջանները: Առաջին թեմական առաջնորդը Տէր Գրիգոր արք. Զաքարեանն (1812-27) էր:

1813ին թեմական առաջնորդը խնդրանքով դիմում է կառավարութեանը Նախիջեւանի, Գրիգորիոպոլի, Ղրիմի համայնքները թեմին փոխանցելու համար, սակայն մերժւում է[35]: 1828ին թեմի առաջնորդ նշանակուած Աշտարակեցին մեծ ներդրում ունեցաւ թեմի վարչական ամբողջացման եւ թեմական նոր դպրոցների ու եկեղեցիների կառուցման գործում:

1830 Ապրիլի 23ին Նիկոլայ Ա.ի (1825-55) հրովարտակի համաձայն ձեւաւորուեց Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմը[36], որի կազմում ընդգրկուեցին Մոսկուայի, Սանկտ Պետերբուրգի, Նոր Նախիջեւանի, Ղրիմի, Բեսարաբիայի, ողջ Նովոռուսիայի հայկական համայնքները[37]: 1858ին թեմական առաջնորդ Տէր Գաբրիէլ արք. Այվազովսկու ջանքերով

---

[32] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան,* էջ 156:
[33] Բարխուդարեան, Ալեքսանեան, էջ 95:
[34] Նոյն, էջ 18-20:
[35] ՀԱԱ, ֆ. 139, ց. 1, գ. 281, թ. 6-7:
[36] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1924, թ. 3:
[37] Նոյն. նաեւ՝ *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, էջ 800:

թեմի կոնսիստորիան[38] հաստատուեց Թէոդոսիայում[39], իսկ 1895ին Քիշնեւից կառոյցը տեղափոխուեց Նոր Նախիջեւան քաղաք: 1898ին թեմական առաջնորդ նշանակուած Ներսէս արք. Խուդավերդեանը (1898-1918) կառավարեց մինչեւ թեմի լուծարումը:

Թեմի վարչաժողովրդագրական նկարագիրը

Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմը 1835ին ունէր 35 եկեղեցի, 11 ծխական դպրոց[40], իսկ 1900ին՝ 43 եկեղեցի, 3 վանք, 1 արքեպիսկոպոս, 6 վարդապետ, 56 հոգեւորական, 63 եկեղեցական սպասաւոր, 17.660 անձ, որից 12.904ը քաղաքաբնակ, 4756ը՝ գիւղաբնակ[41]: Թեմի բիւջէն 350.209 ռուբլի 77 կոպէկ էր[42]: Թեմապատկան երեք եկեղեցիները (Սրբ. Փրկիչ, Սրբ. Գէորգ, Սրբ. Խաչ) ունէին ընդհանուր շուրջ 4418 դեսիատին հողատարածք, որի եկամուտը տարեկան 13085 ռուբլի էր, որից 60 ռուբլին կազմում էր տարեկան հողահարկը[43]: Թեմն ունէր 3 այգի, 3 պարտէզ, 39 տուն, 16 կրպակ, 1 իջեւանատուն[44]: 1901ին միայն Նախիջեւան քաղաքում գործում էին 6 եկեղեցիներ, որոնք կառուցուել էին 1780ին ղրիմահայերի հոգեւոր առաջնորդ նշանակուած Յովսէփ արք. Արղութեանի եւ տեղի հայերի ֆինանսական օժանդակութեամբ[45]: Յետագայում եկեղեցիներ են կառուցւում նաեւ Գրիգորիոպոլում (Սրբ. Նշան), Բելցիում (Սրբ. Գրիգոր Լուսաւորիչ, 1910-12), Եալթայում (Սրբ. Հռիփսիմէ 1905-17)[46]:

Պոլոժենիայով սահմանուած վարչական բաժանումը հաստատուն չէր, երբեմն ռուսահայոց երկու թեմերի (Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի) միջեւ ծագած տարածքային խնդիրները լուրջ դժգոհութիւնների պատճառ էին հանդիսանում, որին միջամտում էր անգամ կաթողիկոսը[47]: Կարասուբուզարը, որը պատմականօրէն Ղրիմի թերակղզու մաս հանդիսանալով Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի կազմում էր ընդգրկուած, 1911 Փետրուարի 17ին Սինոդի № 308 հրամանով փոխանցւում է Աստրախանի

---

[38] Եկեղեցական վարչական կառոյց, որը թեմերում ունէր հոգեւոր, վարչական, դատական գործառոյթներ:

[39] ՀԱԱ, ֆ. 329, ց. 1, գ. 51, թ. 2:

[40] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, էջ 800:

[41] Հեղինակը չի բացառում վիճակագրական անճշտութիւնները, որպէս օրինակ նշելով 1895ի Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմին վերաբերող վիճակագրութիւն, որտեղ հայերի թուաքանակը 25.000ից աւելի էր (Մ. Վարդապետ, էջ 38):

[42] Նոյն, էջ 36:

[43] Նոյն, էջ 8:

[44] Նոյն, էջ 39:

[45] Երուանդ Շահազիզ, «Նոր Նախիջեւանի եկեղեցիները», *Ազգագրական հանդէս*, տպ. Կ. Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1901, էջ 46-75:

[46] *Քրիստոնեայ Հայաստան հանրագիտարան*, էջ 801:

[47] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1924, թ. 8:

թեմին[48]: Նոյն սկզբունքով 1911 Հոկտեմբերի 31ին թեմի վիճակային ատեանի որոշմամբ Աստրախանի թեմին է կցւում Խարկովի նահանգը[49]:

Երկար քննարկումներից յետոյ 1911ին հոգեւոր գործերի բաժանմունքը յստակեցնում է Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմի սահմանները, ըստ որի այն կազմում էր Մոսկուա եւ Պետերբուրգ քաղաքները, Եկատերինոսլաւ, Խերսոն, Բեսարաբիա նահանգները, Ռոստովի եւ Տագանրոկի հայաբնակ շրջանները[50]: Աստրախանի թեմը ցանկանում էր իր վերահսկողութեան ներքեւ վերցնել Վորոնէժի, Կիեւի, Վարշաւայի, Ռիգայի, Տաւրիկեան թերակղզու հայկական ծխերը, ինչն անընդունելի էր համարում Գէորգ Ե. կաթողիկոսը: 1913ին նա նամակ է ուղարկում ներքին գործերի նախարար Նիկոլայ Մակլակովին, որտեղ ներկայացնում է վերոնշեալ վարչատարածքային բաժանման բացասական հետեւանքները, մասնաւորապէս՝ ընդգծելով կառավարման տեսանկիւնից ստեղծուելիք անյարմարութիւնները, քանի որ թեմական կենտրոնը պէտք է Քիշնեւից տեղափոխուէր Աստրախան, ինչը կառավարման գործընթացը բարդացնելու էր[51]: 1912ի արխիւային տեղեկագրում վիճելի տարածքներից միայն Խարկովի նահանգն է ընդգրկուած Աստրախանի թեմի կազմում[52]:

Ռուսահայոց թեմերի վարչական կառուցուածքի եւ յետագայ գործունէութեան վրայ մեծ ազդեցութիւն թողեցին 1917ի Փետրուարեան յեղափոխութիւնը եւ խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ տեղի ունեցած տարածքային վերաձեւումները: 1918ին, Ռումինիան գրաւեց Բեսարաբիան, եւ հոգեւոր կենտրոն Նոր Նախիջեւանի հետ կապը խաթարուեց: Ամենայն հայոց Գէորգ Ե. կաթողիկոսի 1920 Սեպտեմբերի 29ի կոնդակի համաձայն ձեւաւորուեց Նոր Նախիջեւանի թեմը, որն ընդգրկեց Բախմուտայի, Վորոնէժի, Մեծ Սալի, Գրիգորիոպոլիս, Եւպատորիայի, Կարասուբազարի, Կերչի, Կիեւի, Լենինգրադի, Փոքր Սալի, Մելիտոպոլիայի, Մոսկուայի, Նեսվիտայի, Նոգայսկայի, Նոր Նախիջեւանի, Օդեսայի, Օրաբազարայի, Սլովիանսկի, Հին Ղրիմի, Տոգանրոգի, Տոպտիի, Թէոդոսիայի, Խարկովի, Չալտիրի, Իւզովկի, Եալտայի ծխերը[53]:

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ԹԵՄԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ. ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Ըստ 1836ի եկեղեցական կանոնադրութեան հայկական 6 թեմական կենտրոններում թոյլատրւում էր բացել մէկական հոգեւոր սեմինարիա կամ

[48] Նոյն, թ. 2 շրջ.:
[49] Նոյն, թ. 2:
[50] Նոյն, թ. 8:
[51] Նոյն, թ. 5:
[52] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, 381, թ. 24:
[53] Նոյն, ֆ. 409, ց. 1, գ. 3044, թ. 2-5:

թեմական դպրոց, որոնք պէտք է ունենային միջնակարգ դպրոցի կարգավիճակ, իսկ եկեղեցիներին կից՝ ծխական դպրոցներ: Դրանցում պէտք է կրթութիւն ստանային հոգեւորականների երեխաները, սակայն յետագայում այդ որոշումը փոփոխուեց: Թեմական սեմինարիաները պէտք է առաջնորդուէին միատեսակ կանոնագրքով, իսկ մինչ այդ՝ սկզբնական շրջանում թեմակալ եպիսկոպոսների կողմից կազմուած եւ ռուսական իշխանութեան կողմից հաստատուած կանոններով էին գործում[54]: Մատթէոս կաթողիկոսի յանձնարարականով ժամանակաւոր գործածութեան համար կրթարաններին յանձնուել էր ընդհանուր կանոնագիր, յետագայում՝ տեղական մանկավարժական խորհուրդների առաջարկութիւնների հիման վրայ փոփոխութիւններ կատարելու նպատակով, սակայն կաթողիկոսի մահից յետոյ, այն անկատար է մնում[55]:

1836ին ցարական կառավարութիւնը հաստատեց «Բարձրագոյն կարգադրութիւն յաղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց եկեղեցւոյ ի Ռուսաստան» կանոնադրութիւնը (Պոլոժենիէ)»: Դրանից յետոյ ԺԹ. դարի կէսին ռուսահայոց երկու թեմերում բացուեցին բազմաթիւ երկսեռ դպրոցներ:

Անշուշտ, ռուսական արքունիքը մտավախութիւն ունէր, որ դրանք կարող էին հայկական ինքնութեան ձեւաւորման օճախներ դառնալ, ուստի դպրոցների գործունէութիւնը խստագոյնս վերահսկւում էր: 1881ին Ալեքսանդր Բ.ի սպանութիւնից յետոյ կառավարութիւնը ուժեղացրեց ազգային հալածանքները ոչ-ռուս ժողովուրդների նկատմամբ, սահմանափակուեցին նաեւ Մայր աթոռի եւ կաթողիկոսի իրաւունքները: Դպրոցներում արգելուեցին պատմութիւն եւ աշխարհագրութիւն առարկաները, իսկ կրթական ծրագրերը փոփոխուեցին պետական չափորոշիչների համաձայն: Ցարական իշխանութիւնների հալածանքները հայկական դպրոցների նկատմամբ շարունակուեցին 1880 եւ 1890ականների կէսերին: 1897 Մարտի 3ի Պետական խորհրդի որոշմամբ հայկական ծխական դպրոցները ենթարկուեցին լուսաւորութեան մինիստրութեանը[56], իսկ բարձրակէտը դարձաւ 1903 Յունիսի 12ի «Ռուսաստանի Հայ-Գրիգորեան եկեղեցու ունեցուածքի կառավարման կենտրոնացման օրէնք»ը, որով սկսուեց եկեղեցական գոյքի բռնագրաւման գործընթացը: Միայն 1905 Օգոստոսի 1ի Նիկոլայ Բ. ցարի հրամանագրով Մայր աթոռին վերադարձուեց եկեղեցական գոյքը եւ թոյլատրուեց բացել հայկական ազգային դպրոցներ:

Աստրախանում թեմական դպրոց բացելու առաջին քայլերը կատարուել են դեռեւս 1780ականների սկզբին՝ թեմական առաջնորդ Արղութեանի կա-

---

[54] Ա. Երիցեանց, *Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIXրդ դարում, հատոր Բ*, Արագատիպ տպարան, Թիֆլիս, 1895, էջ 368:

[55] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 381, թ. 24 շրջ.:

[56] Բարխուդարեան, Ալեքսանեան, էջ 32:

ռավարման տարիներին, սակայն այն աշխուժ գործունէութիւն չի ծաւալել, իսկ 1838ին բացուած դպրոցը, չի ունեցել համապատասխան թուով դասաւանդողներ: 1842ին գործել է ընդամէնը երկու ուսուցիչով եւ ինը աշակերտով[57], որի պատճառով էլ 1848ին փակուել է:

Թեմում միջնակարգ կրթութեամբ դպրոց բացելու խնդիրը մեծապէս յուզում է Աստրախանի թեմի առաջնորդ Գէորգ Սուրէնեանցին, որի 1887 Օգոստոսի 6ի յայտարարութեամբ, այնուհետեւ 1889 Յունիսի 25ին Աստրախանում գումարուած ծխական ժողովում, քննարկում է դպրոցի բացմանը եւ կանոնադրութեանը վերաբերող հարցերը[58]: Եւս մէկ քննարկում լինում է 1895 Մայիսի 26ին Աստրախանի ռուսահայոց թեմի ժամանակաւոր ղեկավար Խորէն Ստեփանէի գլխաւորութեամբ գումարուած պատգամաւորական ժողովում[59]:

1906 Յունիսի 1ին Ռուսաստանի ներքին գործերի նախարարի եւ նախարարների խորհրդի նախագահ Ս. Ստոլիպինի, Աստրախանի նահանգապետ Գրոմբչիսկու թոյլտուութեամբ նոյն թուականի Սեպտեմբերի 8ին բացւում են թեմական դպրոցի առաջին երկու նախակրթարանները[60]: Աղիւսաշէն շէնքը պատկանում էր Սրբ. Պօղոս-Պետրոս եւ Սրբ. Լուսաւորիչ եկեղեցիներին[61]: Կրթարանը հաստատուած կանոնադրութիւն չունենալու պատճառով՝ նահանգապետը չի թոյլատրում հիմնական դասարանների բացումը: Ներքին գործերի նախարարին յանձնուած կանոնադրութեան նախնական տարբերակը, որը որոշ յօդուածների վերանայման նպատակով ուղարկուել էր Մկրտիչ կաթողիկոս Խրիմեանին (Յաւելուած 1)՝ նրա վախճանումից յետոյ լուծում չի գտնում[62]: Թեմական դպրոցի անորոշ կարգավիճակը ազդում էր աշակերտների յաճախելիութեան վրայ: Դպրոցը բացման տարում ունէր 75 աշակերտ, իսկ 1909ին՝ 18[63]:

Իվերջոյ դպրոցի կառավարիչ յանձնաժողովի եւ ուսուցիչների նախաձեռնութեամբ կազմւում է խառը յանձնաժողով, Նոր Նախիջեւանի թեմական սեմինարիայի կանոնադրութեան օրինակով եւ, ցարական կառավարութեան առաջարկած փոփոխութիւնները հաշուի առնելով, 12 կէտից բաղկացած նոր կանոնադրութիւն է ուղարկւում կաթողիկոսին, որն իր հեր-թին, այն 1910 Փետրուարին ներկայացնում է ներքին գործերի նախարարին[64]:

---

[57] Ս. Կ. Խուդոյեան, *Արեւելահայ դպրոցները 1830-1920 թուականներին*, «Լոյս», Երեւան, 1987, էջ 312:
[58] ՀԱԱ, ֆ. 52, ց. 2, գ. 810, թ. 91 շրջ.:
[59] Նոյն, թ. 91 շրջ.:
[60] Նոյն, թ. 94:
[61] Նոյն, ֆ. 57, ց.1, գ. 381, թ. 12:
[62] Նոյն, ց. 2, գ. 878, թ. 1-3:
[63] Նոյն, թ. 3 շրջ.:
[64] Նոյն, թ. 3, 57:

Թեմական դպրոցը այդպէս էլ սեմինարիայի չվերածուեց եւ կանոնաւոր միջնակարգ կրթութիւն չկազմակերպուեց[65]: 1912ին կրթարանը դեռեւս հաստատուած կանոնադրութիւն չունէր, հետեւաբար շարունակում էր իր գործունէութիւնը սկզբնական կարգավիճակով: Տեղի ծխական ժողովի եւ թեմական առաջնորդի որոշմամբ, դպրոցի թափուր սենեակները անվճար հիմունքով տրամադրւում են Հայոց կանանց բարեգործական ընկերութեանը[66]: Մինչեւ Ռուսական կայսրութեան անկումը թեմական դպրոցի կարգավիճակը մնաց անփոփոխ:

1912ի դրութեամբ Աստրախանի թեմն ունէր 44 ծխական դպրոց, որոնցից 33ը՝ մէկդասեայ, 11ը՝ երկդասեայ: Դպրոցներից 35ը ունէր երկսեռ, 7ը՝ արական, 2ը՝ իգական ուղղուածութիւն: Ուսումնարաններից 24ը բացուել կամ վերաբացուել էին 1908ից յետոյ: 1912ի դրութեամբ աշակերտների ընդհանուր թիւը 2801 էր:

Թեմի կրթամշակութային կեանքի գործում մեծ նպաստ բերեց Արղութեանի ջանքերով ձեռք բերուած տպարանը, որը 1795ին Նոր Նախիջեւանից տեղափոխուեց Աստրախան եւ գործեց մինչեւ 1800[67]:

1871ին Խալիբեան դպրոցի փակումից յետոյ Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմում երկար տարիներ միջնակարգ կրթութիւնը դադարեցուեց: Թէեւ 1871ին Թէոդոսիայում կայսեր հրամանով թեմական սեմինարիա բացել յաջողուեց, սակայն այն հիմք հանդիսացաւ Նոր Նախիջեւանի հասարակութեան համար դիմելու կաթողիկոսին՝ խնդրելով այն բացել իրենց քաղաքում: Կաթողիկոսի յանձնարարութեամբ քաղաքային վարչութիւնը ընտրեց եւ հաստատեց ապագայ դպրոցի հոգաբարձութեան կազմը: Կառավարութեան կողմից հաստատուած կանոնադրութիւն չունենալու պատճառով, սակայն, նահանգապետն այն չվաւերացրեց:


1875ին թեմական դպրոցը իր դռներն է բացում որպէս չորսդասեայ հոգեւոր ուսումնարան: 1879ին Գէորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի կողմից ներքին գործերի նախարարութեանը ներկայացուած «Ընդհանուր կանոնների» նախագծի փոփոխութիւններից յետոյ 1880 Յունիսի 27ին կայսերական հրամանով հոգեւոր դպրոցը վեր է ածւում սեմինարիայի[68]:

Թեմական սեմինարիայում մեծ ուշադրութիւն էր յատկացուած կանոնաւոր կրթութեան կազմակերպմանն ու աշակերտների վարքային դրսեւորումներին: Դասարանները կահաւորուած էին անհրաժեշտ գոյքով: Դասաւանդւում էին հայոց լեզու, ռուսաց լեզու, լատիներէն, թուաբանութիւն, եկեղեցու պատմութիւն եւ աստուածաբանութիւն, գծագրութիւն, մաթեմատիկա եւ այլ առարկաներ: Ուսուցիչները Խալիբեան դպրոցի, Լազարեան

---

[65] Խուդոյեան, էջ 313:
[66] ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 381, թ. 21:
[67] Բարխուդարեան, Ալեքսանեան, էջ 61:
[68] Խուդոյեան, էջ 415:

ճեմարանի, Մոսկուայի կայսերական համալսարանի, Մայր աթոռ Սրբ. Էջմիածնի ճեմարանի, Երեւանի ուսուցչական սեմինարիայի շրջանաւարտներ էին[69]: Ճեմարանն ունէր 6 դասարան, նախակրթական բաժինը բաղկացած էր 3 մասից՝ ստորին, միջին, բարձր: 1913-14 կրթաշրջանում ճեմարանն ունէր 276 աշակերտ[70]: Մինչեւ 1917 ճեմարանը պահպանում է իր միջնակարգ կրթական հաստատութեան կարգավիճակը:



Աստրախանի թեմական դպրոցի ժամանակաւոր կառավարիչ յանձնաժողովի նամակի առաջին էջը՝ ուղղուած Ամենայն հայոց կաթողիկոս Մատթէոս Բ.ին՝ Աստրախանի թեմական սեմինարիայի անորոշ կարգավիճակի վերաբերեալ (ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 878, թթ. 3-3 շրջ.)

Թեմական կրթական ծրագրեր մշակելու եւ վաւերացնելու, դասագրքեր հրատարակելու գործընթացը մեծ ջանքեր էր պահանջում: Ռուսահայոց թեմերում աստուածաբանական առարկաները դասաւանդւում էին առանց համապատասխան դասագրքերի, ինչն զգալի բարդացնում էր դասապատրաստումը[71]: 1912 Հոկտեմբերի 2–10ը Էջմիածնում ռուսահայոց թեմական առաջնորդների, Սինոդի անդամների մասնակցութեամբ միացեալ խորհրդակցութիւն է տեղի ունենում, որտեղ քննարկւում են նաեւ կրթական մի շարք խնդիրներ, այդ թւում՝ ծրագիր-կանոնադրութիւն կազմելու, պետական դպրոցներում հայոց լեզու եւ կրօն դասաւանդելու, դպրոցական տօների, թեմական տեսուչների եւ այլ խնդիրներ:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկումից յետոյ Հայոց Եկեղեցու բարեկարգման այս եւ մնացեալ ծրագրերը ընդհատւում են, իսկ 1917 Փետրուարեան յեղափոխութիւնից յետոյ լուծարւում են Սինոդը, կոնսիստոր-

[69] «Տեղեկագիր,Նախիջեւանի եւ Բեսարաբիոյ թեմական դպրանոցի տեսչի վասն 1893-94 ուսումն. տարիոյ», *Արարատ*, ԻԸ:1895, էջ 71:

[70] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2239, թ. 8:

[71] «Կրօնի դասագրքերի հարցը», *Հովիտ*, 11 Մայիսի 1914, էջ 277:

իաները եւ միւս հոգեւոր կառավարութիւնները, որի փոխարէն ձեւաւորւում են Գերագոյն, կենտրոնական, թեմական, գաւառական խորհուրդները[72]:

Այսպիսով, ԺԸ. դարից ԺԹ. դարասկիզբ՝ Ռուսական կայսրութեան ռազմաքաղաքական գոր-ծերում Հայ Եկեղեցին, յատկապէս սկզբնական շրջանում, աջակցութիւն ցուցաբերելով ռուսական իշխանութիւններին, փո-խարէնը ստացել էր պետական աջակցութեան երաշխիք՝ եկեղեցական գործունէութիւն իրակա-նացնելու հարցում: Արեւելեան Հայաստանը նուա-ճելուց յետոյ եկեղեցին ներառուեց վարչական համակարգի մէջ, եւ դարձաւ նոր իրողութեան քաղաքական բաղադրիչ: Ռուսահայոց թեմերի ձեւաւորու-մը նոյնպէս այդ զարգացումների արդիւնքն էր: Աստրախանի, Նոր Նախի-ջեւանի եւ Բեսարաբիայի թեմերի ձեւաւորումով հաստատուեց Մայր աթոռ Սրբ. Էջմիածնի ներկայութիւնը եւ ազդեցութիւնը ռուսական գաղթօճախի վրայ: Եկեղեցական վարչարարութիւնից բացի, հայութեան թուաքանակի աճման պայմաններում, թեմերն իրականացրին կրթամշակութային, ազ-գային ինքնութեան պահպանման կարեւոր առաքելութիւն: Ռուսական կայսրութեան վերաձեւումներն անմիջական ազդեցութիւն ունեցան թեմերի վարչաժողովրդագրական նկարագրի վրայ, իսկ կայսրութեան անկումից յետոյ թեմերը դուրս մղուեցին պետական, հասարակական կեանքից՝ կորց-նելով նախկին ազդեցութիւնը:

THE ASTRAKHAN, NOR NAKHIDJEVAN AND BESARABIA PRELACIES OF THE CATHOLICOSSATE OF ETCHMIADZIN DURING TSARIST RUSSIA (1700s-1917) (SUMMARY)

MARIAM HAKOBYAN
mariam10hakobyan10@gmail.com

The paper focuses on the formation and the religious institutionalisation of the Armenian communities in Astrakhan, Nor Nakhidjrevan and Besarabia of the Catholicosarte of Etchmiadzin, their demographic features, historical trajectory and the shifts in the administrative areas of these prelacies.

The author argues that the prelacies were important communal institutions, which, as the size of the community grew, went beyond ecclesiastical administration by dealing with events and ceremonies which developed national and cultural awareness; they also preserved identity and established schools. Furthermore, the prelacies functioned as a bonding institution between the community members and the fatherland and between the community and the host state.

[72] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2. գ. 457, թ. 52: